ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25.01.2024 13:03

Փաստաբանների պալատ են այցելել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավար կազմի ներկայացուցիչները՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի հնարավորությունները փաստաբաններին ներկայացնելու համար:

Հանդիպման մեկնարկին Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Գլխավոր հարկադիր կատարող Արսեն Մնացականյանը և թվայնացման ոլորտը համակարգող, Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ Գագիկ Հարությունյանը քննարկել են արդյունավետ համագործակցության ընդլայնմանն ու ապահովմանն առնչվող, ինչպես նաև այլ առանցքային հարցեր:

Այնուհետև փաստաբանների հետ հանդիպման ընթացքում Գագիկ Հարությունյանը Փաստաբանների պալատի ներկայացուցիչներին ծանոթացրել է հարկադիր կատարման ոլորտում առկա թվային գործիքների հնարավորություններին, դատարաններից, արբիտրաժային տրիբունալից, նոտարների կողմից էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման ներկայացվող ակտերի թվայնացման գործընթացին:

Փաստաբաններին մանրամասն ներկայացվել է նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնական կայքի (www.cesa.am) թվային հարթակների հնարավորությունները, ինչպես նաև դրանց միջոցով վճարումներ կատարելու առավելությունները, QR կոդով հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների բնօրինակներին հասանելիության ապահովումը և այլ կարևոր դրույթներ:

Փաստաբանների կողմից բարձրացվող հարցերը բազմաթիվ էին, որոնց վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների կողմից հնչեցին սպառիչ պատասխաններ: Փաստաբանները հանդես են եկել նաև կառուցողական առաջարկներով:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել բովանդակային քննարկման համար: Երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել այսօրինակ ձևաչափով հանդիպում-քննարկումներ առաջիկայում ևս իրականացնել:

Հանդիպման ավարտին հյուրերը նաև շրջայց են ունեցել ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի տարածքում, այցելել ՀՀ փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ:





Արսեն Մնացականյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })